

Է Տ Ի Ւ Դ

Ա. Տ Ե Ր -Զ Ա Ք Ա Ր Ե Ա Ն Ի

Երեկոն անտանելի ձանձրալի էր. ձանձրալի էր ինչպէս էիս. լախանեան ամեն երեկոց, որի մասին գաղափար ունենալ կարող է միայն նա, որն իր անձի վերաց փորձել է այդ—ապրել է Բալախանու կեանքով գոնեաց մի քանի ամիս։ Մենակութիւն, բառի բուն նշանակութեամբ մենակութիւն, մարդկանց բազմութեան մէջ, Կաս աշխարհում թէ չկաս, ոչով չի հարցնում. չունես ոչ մի կապ քեզ շրջապատող մարդկանց հետ—ոչ ով չի հետաքրքրւում դրութեամբ և զու էլ չես հետաքրքրւում ուրիշի դրութեամբ։ Հազարաւոր մարդկանց կեանքի ովկիանոսը շպրտել է զանազան կողմերից այսուղ «մի կտոր հաց» գտնելու համար և նոքա անսպատի մէջ մէկը միւսից հեռու բսած թիվիկների պէս ապրում են բաժան բաժան. «ամեն մարդ իր համար». ապրում են ծառայելու համար, ծառայում «մի կտոր հաց» գտնելու համար. ապրում են առանձնացած, ամեն մէկը իր մէջը մտած։ Զկաց մի աչնպիսի բան, որ բոլորի սրաին մօտիկ լինէր, որը բոլորին հաւասարաչափ հետաքրքրէր, շփում առաջ բերէր, կապ ստեղծէր։ Երկու մարդ չես գտնիլ մի հաւատ, մի գաղափար ունեցող, մի բանի սպաշտող. երկու մարդ չես գտնիլ մի ցաւ ունեցող. կրկնում եմ ամեն մէկը կղզիացել է իր մէջ—իր ցաւն ունի, իր հաւատը։ Եթէ մարդիկ ընդհանուր մի բան ունին, այդ «հաց» գտնելու ասպահովութիւն, «փող» ձեռք բերելու անզում ձգտումն է. մի ձգտում, որն ի հարկէ, մարդկանց միացնելու բնաւորութիւնը և յառկութիւնը չունի.

Բալախսանինոր եկող մարդը, եթէ մարդավայել կեանքի մասին փոքր ի շատէ գաղափար ունի, առաջ մի վրդովլում է, խօսում է, դէս ու դէն է ընկնում, աշխատում է և կապու, ընկերութիւն ստեղծել յետոց, շատ շուտ ճահիճը կլանում է նրան և կրկին ամեն ինչ գնում է իր սովորական կարգով:

—Եղբայր, գոնեաց ամիսը մի անգամ ժողովւենք, ուրիշ ոչինչ, ուղղակի քէփ անելու — ախար անասունն էլ այսպիսի կեանք չի վարում, բացականչում է արդէն յուսահատուած նորեկը: Պատահում է, որ մէկին աշողուում է զլուխ բերել «քէփի» երեկոն. հաւաքում են մի քանի հոգի մէկի մօտ: Մէկը գալիս է ժամի 6-ին, միւսը 7-ին, երրորդը 8-ին, 9-ին և աւելի ուշ: Սկսում են պատւէրներ վսորովածին, ափաւին զինու և այնու ժողովւածների մէջ ընդհանուր խօսակցութեան նիւթ չկայ, և ահա սկսում է մի այսպիսի բան:

—Ժերոնկան հորից հանեցինք. հարցնում է մէկը միւսից:

—Ե՛ն, գրողը տանի այսպիսի պաշտօնը. 10-դ Խ-ից ժելոնկան հանեցինք, շտանգները մնացին 8-դ Խ-ի մէջ, պատասխանում է այս վերջինը: Միթէ: Ինչպէս պատահեց: Այսպէս և այնպէս Հարցեր և պատասխաններ երկու հոգու մէջ:

Հէնց այդ ժամանակ ուրիշ երկու հոգի խօսում են.

—Իմանում ես, ասում են Գէորգեանցի մօտ տեղ է բացւում 150 մանէթով և կարծեմ աշխատում են Մեսրովին զցել այստեղ. Մի կարելի մի կերպ անել, որ ես վարձեմ:

—Վատ չի լինի, բայց ում միջոցով և այն և այն:

Մի երրորդ զոյդ խօսում է մի ուրիշ անկիւնում — բոլորը առանձին առանձին և բոլորն էլ նաւթի, «հացի», «տեղի» և «փողի» շուրջը և այդպէս անվերջ:

—Այս էլի էս զահրումար հորն ու նաւթը. ախար այդ զահրումարը մեղ բոլորովին անասնացրեց, դէ հերիք է էլին: Սա ինչ խօզութիւն է՝ նաւթ, նաւթ, նաւթ, հոր ու հոր, հերիք է էլի, ուշքի գալով բացականչում է մէկը:

Խօսակցութիւնը փոխւրում է, բայց մի քանի բոսէից յետոց նոյն բողոքով անդիտակցաբար բացականչում է ևլյ տղայ, Նապուհեանցի հորը էլի խփում է (ֆանտանրցետ), այսպէս էլ բաղդ կը լինի:

—Միթէ, ուժեղ է, քանի հարիւր հազար (փութ) է խփում, բացականչում են մի քանի հոգի միասին, և նաւթը կրկին դառնում է խօսակցութեան միակ առարկան, կրկին մարդիկ ցոյց են տալիս վերին աստիճանի մեջ հետաքրքրութիւն դէպի շաջող տեղ, դէպի շաւ ռոճիկ, մինչև որ ուշքի գալով մէկը նորից բացականչում է. «Դէ հերիք է էլի, տղերք», «մենք անասնացել ենք» և այլն:

Սկսում է մի այլ խօսակցութիւն հարկադրւած, առանց ներքին պահանջի, ուր շուտ շուտ լսում է հարկաւոր է» խօսքը: Հարկաւոր է գրականական երեկոյթներ սարքել, հարկաւոր է ընկերական երեկոյթներ սարքել, հարկաւոր է շփել, հարկաւոր է...»

Յանկարձ հեռախօսի զանգակը հնչում է, մէկը «չո՞ւ ասելով նրա հասցէին, գնում է նրանով խօսելու, մնացածները ուրախութեամբ (իրանք չիմանալով են ուրախանում) լոռում են մինչեւ նա դալիս է:

—Հը, ով էր, ինչ էին ասում, հարցնում են կրկին մի քանի հոգի միասին:

—Ա՛ դրանց էկրն անիծած, նորելիցն են հարցնում թէ ինչու նաւթներիս մէջը ջուր կայ: Մահանայ է էլի, նաւթը էժանացել է, ընդունելը ձեռնոտու չէ, սկսում են իրանց սովորական նազն ու թուզը և այլն և այլն: Կրկին նաւթ, նաւթ, նաւթ:

Խօսակցութեան ուրիշ նիւթ չկայ, հնարում են մի կերպ մինչեւ ընթրիք, որին ամենքն էլ անհամբեր սպասում են որպէս տղատիչ հրեշտակին: Երբ գինին հրապարակ է զալիս և նրանից «մի փոքր» անուշ են անում, տղորց աչքերի մէջ փայլ է երևում, լեզուները փոքր բացւում են:

Շուտ շուտ լսում են «տայ Աստւած» խօսքերը. «տայ Աստւած որ գրադարան բացւի, տայ Աստւած, որ մեր «խոզէլինները (տէրերը) իրանց ծառայողների համար բնակարաններ շինեն, տայ Աստւած, որ նոքա փափկանան և վերաբերւն դէպի իրանց ծառայողները, որպէս դէպի մարդիկ, ճանաչեն նոցա մէջ մարդկացին արժանաւորութիւնը, տայ Աստւած... Բայց և այնպէս տիրում է մի տեսակ անկենդանութիւն—անկեղծութիւն չկայ և կարծես թէ խօսողները իրանք էլ իրանց ասածին չեն հաւատում և չեն համակրում:

Ընթրիքից յետոյ մի քանիսը իսկոյն դնում են գործ ունինք, և նզովւհի այսպիսի կեանքը և այլն ասելով. մնում են մի քանի հոգի, որոնք անյարմար են համարում լնթրիքից իսկոյն և եթ ցրւելը և, որպէս զի լրու նստած չմնան, սկսում են, ձևի համար, ինքնաքննադատութիւնը:

«Ձենք շփում, խոյս ենք տալիս փոքրերից, կրտսեր եղբօրից, մեծամոռութիւնը քանդում է մեր տունը. «Հարկաւոր է մշակի, արհեստաւորի հետ նստել վերկենալ. մէջ քաշել նրանց, յամենայն դէպս չխորշել նրանցից», «Հարկաւոր է ձեռք վերցնել կաստացականութիւնից», «Հարկաւոր է» և այլն: Խօսքերի և միատեսակ խօսքերի կախարդած շրջանից դուրս ոչ մի քայլ:

Մի կերպ վերջանում է երեկոն, և, պէտք է ասած, վերջանում է յուրախութիւն ամենքի: Դուրս դալուց յետոյ նոքա իրանց թեթևացած են զգում: արհեստական երեկոյի ծանրութիւնը «իսկական» ձգտմանց ծածկելու դժւարութիւնը ընկնում են նրանց ուսերից և, առանձնանալով, նոյսանից ամեն մէկը ազատ մտածում է նաւթի և ռոճիկի մասին, ամբողջ էութեամբ խորասուզում է «հաց» գոնելու մոքի մէջ: «Երեկոն» էլ չի կրկնում մինչեւ մի ուրիշ նորեկի մէջ ընկնելլ:

Կրկին նոյն բողոքը, կրկին նոյնալիսի մի երեկոյ և կրկին լուսութիւն, առանձնութիւն. անվերջ, միատեսակ և մեքենայ դարձնող աշխատանք. ուտել, խմել և քնել:

Մարդկանցից շատերը այնքան են բթացել որ ձանձրութիւն էլ չեն զգում: բանում են, բանեցնում են, խեղփում են իրանցից թոյլերին և իրանցից ուժեղներին սպասաւորելով առաջ են դնում, և երջանիկ են կան նաև այնպիսիները որոնց, ամեն ինչ, որպէս երկնքի թռչուններին, արևում է առանց ցանելու. նոքա էլ ի հարկէ երջանիկ են և ձանձրութեան տակ չեն ընկնում: քնում են մինչեւ ժամի 10-ը, յետոյ թղթերին ստորագրում, հրամաններ տալիս, ուտում, խմում և կրկին քնում մինչեւ երեկոյ, որը վրայ հասնելով չի բերում նրանց այն անտանելի ձանձրութիւնը, որի տակ ձնշում են հասարակ մահկանացուները—այլ ուրախութիւն կանաչ սեղանի և զինու բաժակի շուրջը: Սիրում են Հաֆիզին, խօսում են Բէօրնէ ու Շեկսպիրից, օդի մէջ սաւառնում են և իջնելով

ցաւերով լի աշխարհը, նրան ստեղծած են համարում իրանց բաւականութիւնների համար—նորա համար որպէս զի իրանց վրայ նայեն մարդիկ և ուրախանան, հիանան. իսկ երբ մէկը յանդգնուում է այլ կերպ նայել նրանց վրայ՝ սաստիկ բարկանում են և այդ մէկին... Բայց ես հեռացայ իմ նպատակից:

Սյոպէս, երեկոն սովորական «Բալախանեան» էր, կեանքի զարկերակ չէր նշմարում ոչ մի տեղ. բայց այս անգամ ձանձրութիւնը ևս առաւել սաստիկ, ուղղակի սպանիչ էր շնորհիւ դուրսը փշող հիւսիսային քամուն, որի կատաղի մանչիւնը ամեն կողմ թագաւորելով, խլացնում էր մեքենաներից ելող շոդու ուժգին վշշոցն ու տնքոցը նոյն իսկ: Առել էր և նաև թքաշողը. չէր երգում նա իր մելամաղձոտ սրտաշարժ երգը՝ «Ա’ իս թէ տար ինձ Աստւած, լեռը բարձրանալ, հայրենի երկիր, քեզ մի էլ տեսնել, կարօտի առնել» և այլն: Երևի ցուրտը կուշ էր բերել թշւառականին և ձանը փորը գցել...

Ես էլ սովորականին պէս տանս մենակ նստած տեղային լրագրի օրւայ համարն էի կարդում: կարծեմ երրորդ անգամ, պարապութիւնից Դուսս ծեծեցին, դանդաղութեամբ վերկացայ տեղիցս և բաց արի նրան:

—Պահ, անտեր մնաս, քամի՛, քիչ է ֆնում գետինը պոկի, մարդուս չորացնի, ասելով ներս ընկաւ բերան-մերանը շարժով փաթաթած Մինասը, և ոչինչ, նոյն իսկ բարի երեկոյ չասած, սկսեց շարժը բացանել և քիթն ու բերանը ազատել:

Նա մեր զիւղացի էր (այսինքն մենք համագիւղացի էինք) և ծառայում էր իմ հարեւան նաւթահանքում զիշերւաց գործակատարի հասարակ սրաշտոնով: Նորա հետ տեսնուում էի շատ քիչ—միայն փողոցում, սրատահմամբ, և աւելի էլ քիչ խօսում: Բարեւ, Աստուծոյ բարին—պրծանք գնաց: Ես երբէք չի սպասում, որ նա համարձակութիւն կունենայ գալ իմ տունը, այդ պատճառով էլ զարմացմամբ նայեցի նրան երեսն ի վեր: Նա այդ նկատեց և ձեւացրեց թէ չի նկատում: Ես խէթ աչքով նայեցի նորա մաշւած և կեղտոս շորերին. նա այդ էլ նկատեց. բայց էլի վրան չառաւ:

—Ինչու ևս ոսի վրայ մնացել, պ. Սեղրակ, նեղութիւն մի քաշիր, ես մի շատ հասարակ մարդ եմ, ոտի վրայ մի կանգնիւ,

նստիր —ասաց նա ինձ մի տեսակ հեգնութեամբ, իսկ ինքը առանց այլ և այլութեան առաւ բազկաթուը և նստեց: Քիչ էր մնացել, որ Կրեզոսի որդու պէս ծկլտայի թէ անիրաւ, ի՞նչ ես անումն և այլն, բայց մի կերպ զսպեցի բարկութիւնս, բայց և այնպէս մի վերին աստիճանի թշնամական հայեացք զցեցի նորա վերալ: Այդ ժամանակ միայն նկատեցի, որ նա խմած է, որով և բացադրւեցին նորա համարձակութիւնները:

Ի՞նչ պէտք էր արած. պահապանին կանչել, որ զուրս տանեն նրան իմ բնակարանից, շատ խիստ կը լինէր. «ինչպէս էլ լինի» մեր գիւղացին է, լաւ չէ մտածում էի ես. իսկ նա ունքերը կիտած, զլուխը քաշ էր զցել և նայում էր սեղանի վրայ գցած, ոսկի թելերով նախշած, թանգագին ծածկոցին: Նա նայում էր ծածկոցին գլուխը շարժելով և «հըմա անելով:

Ճարահատեալ առաջ աթոռս և նստեցի նրանից բաւականին հետու և, լրագրի թերթը առնելով ձեռքս, սկսեցի իբր թէ կարդալ:

—Մօտիկ նստիր, մօտիկ, Սեղրակ խոզէյին, պարոն ինժեներ, վասե благородіօ, կարդալու ժամանակ չէ, գազեթդ չի փախիլ, յետոյ էլ կը կարդաս, մօտպ հիւր եմ եկել, մի վախենար, ես էլ քեզպէս մարդ եմ, ինձ էլ Աստւած է սոեղծել. շորերիս կեզտը քեզ: ի կոշիլ, կոշի էլ ջանդ լինի սազ, զարաւաշդ կը լւանայ, կեզտը կը գնայ — ասաց նա խուպոտ ձայնով, նեղացած — և զլուխը շաշահարելով աւելացրեց՝ «հայեա, այ գիդի հա:

Մինասին արբած չէի տեսել. նայում էի վրան և չպատասխանեցի: Փոքր լուս թիւնից յետոյ նա էլի խօսեց.

—Դէ խօսիր էլի, Սեղրակ խոզէյին, այ Դաւութենց Սաքուն տղայ: Աստւած քեզ լեզու է տւել, խօսալու ընդունակութիւն, մի հարցուր թէ այ շինական, ինչպէս Թօ, ի՞նչ տեղ ես, սազ ես թէ մեռած, կուշտ ես թէ քաղցած — հօ զենաւդ չի թափւի, հօ չինըդ չի ընկնի, ինչ ես քարի պէս լրել: Նա ուժգին ախ քաշեց, կրկին ունքերը վրայ տեց, մտածմունքի մէջ ընկաւ և երկար լուռ մնաց:

«Որտեղ էիր, կը լինի երկու ամիս է չես երևումն, ինքս էլ չը դիտեմ ինչու այդ և ոչ ուրիշ հարցով դիմեցի Մինասին, դիմեցի, որպէս զի լոռութիւնը խանգարւի:

Այդքան ժամանակ լուռութիւնից յետոյ, նա յոյսը կտրել էր

թէ երբ և իցէ իրա մօտ բերանս կը բանամ. այդ պատճառով, երբ ձախնս լսեց նա, համարեա վերթուաւ, ինչպէս մի մարդ, որին անսպասելի կերպով զարթեցրին քաջցր քնից:

—Փափաղիս տակին, պ. ինժեներ, փափաղիս տակին, այն. ասաց նա մի տեսակ ատամները զբացնելով. յետոյ յանկարծ ձեռքը մուշտի առաւ և խփեց սեղանին:

—Գիւղն էի գնացել—կրկին սկսեց նա—դու այդ չգիտէի՞ր ի հարկէ, ինչ ասել կուզի... Հայեա, ա գիւղի հա...

—Խօսիր տեսնեմ՝ գիւղումն ի՞նչ կայ, ի՞նչ են ասում, սազ սալամաթ ե՞ն, հարցրի ես մի բան հարցրած լինելու համար, մանաւանդ որ նա այդ պահանջում էր:

Մինասը խսկոյն չպատասխանեց հարցերիս. նա նայեց երեսիս այնպէս, որ կարծես կամենում էր այնտեղ կարդալ թէ արդեօք իսկապէս ինձ հետաքրքրում է գիւղը իւր դրութեամբ, թէ հէնց այնպէս եմ հարցնում.

Գուշակելով նորա այդ միտքը, ես աշխատեցի դէմքիս լրջութիւն տալ և հետաքրքրուած ձեանալ: Մինասը ինձնից դարձրեց երեսը, աչքը յառեց ճրագի բոցին և փոքր յետոյ, առանց աչքերը հեռացնելու ճրագից, սկսեց.

—Գիւղը՝, ինչու, կայ իրա համար էլի... Գիւղը, հըմ, քանդւածը քանդւել է, մնացածն էլ քանդւում է, վերջացրեց նա յանկարծ: Տիրեց լուռթիւն, որը տեսեց մօտ 10 րոպէ. յետոյ Մինասը սկսեց երգել թուրքերէն.

Անձար սիրելիս մի լար.

Օր է, կանցնի, մի լար:

Այս դուռը կապող Աստւած

Մի օր կը բացի էլ մի լար, այ, ցաւդ տանեմ
հայ, հայ...

Ես զգացի, որ նա ունէր մի ցաւ, մի խոր վիշտ, որը նրան տանհջում էր և որի մասին խօսելու անզուսպ պահանջ էր զգում նա, բայց, «ինձ ի՞նչ», մոտածեցի ես և կրկին լուռ մնացի:

Նա բնազդումով զգաց այն անհուն սառնութիւնը, որը թագաւորում էր իմ սրտի մէջ և հասկացաւ իմ անսահման անտարբերութիւնը դէսլի իր ցաւերը: Զգաց, փոշմանեց որ եկել էր իմ մօտ

և մի տեսակ տատանման մէջ ընկաւ. «գնալ թէ մնալ» գրւած էր նորա դէմքի վրայ, չնացելով որ հարբած էր նա: Նա վերկացաւ տեղից, մի քայլ արաւ դէպի դուռը, բայց նկատելով ի՞ո դէմքի վրայ ուրախութիւն, ջղրու կրկին նստեց իրա տեղը:

Այդ արդէն չափից դուրս էր, բարկացայ ես և կոպտութեամբ ասացի:—Զէր կարելի որ քիչ լակէիր, կամ, լավելուցդ յատով, իսկի չվնի տեղդ վայրընկնէիր և թրւ չգայիր:

Վիրաւորւած այդ խօսքերից Մինասը բառի բուն նշանակութեամբ կատաղեց, որ ես բոլորովին չէի սպասում. կատաղեց, արագութեամբ առաւ աթոռը, դրեց դիմացս, նստեց բոլորովին մօտիկ, համարեա քիթը քիթս առած, չոեց աչքերը. մի բովէ մնաց առանց շունչ քաշելու և երբ խօսալ սկսեց, ինձ թւաց, թէ մի ռումբ պայմթեց.

—Այ ձեր ամբողջ մարդկութիւնը, որի վրայ թքելն անգամ ափսոս է: Նախատել—այդ դուք գիտէք, կարող էք, և միայն նախատել և այդ, ձեր մեռելութիւնը, փթածութիւնը ծածկելու համար: Ձեր մասսաբը, որ բնաւ չունէք, սզովմած. որդն էք դուք և զգւելիններ, որոնց սրտին անհասկանալի են մեր ցաւն ու հոգսերը, մեզ մաշող տառապանքները, որոնք հնւում են հէնց մեծ մասամբ ձեր գարշելիններիդ պատճառով. նղովւէք դուք, որ սրտի տեղ ստամբառվ էք զգում, որ...

Բայց բարկութիւնս գագաթնակէտին հասած, մեռելի գոյն ստացած, ես տեղիցս վեր թւաց, որ սպահապանիս կանչեմ, դուրս շպրտելու այս անկոչ հիւրին:

Նա հասկացաւ դիտաւորութիւնս, խօսքը կիսատ թողեց, կտրեց առաջս—նատիր, ասաց—ես պէտք է քեզ պատասխանեմ և այնպէս գնամ: Եթէ չես ուզում որ մեծ խայտառակութիւն անեմ—ինձ համար այժմ միւնոյնն է—նատիր:

Ճար չունէի, «ինչ կասեն, եթէ լաեն որ մի որևէ է պրիկաշչեկ (գործակար) տունս է եկել և սկանդալ արել» մտածեցի և նստեցի:

Սպասածիս հակառակ Մինասը փոքր հանդարտեց և սկսեց խօսել առանց առանձին բարկութեան, այլ սիրով լի, զգացւած.

—Ինչն եմ արբել, հարցնում ես դու:—որովհետեւ (շեշտելով խօսքերը) տեսնում ես այսաեղ (նա ցոյց էր տալիս սիրով) այրւում

է ու խորովում ցաւերից.—ցաւերից, որոնք տարիների ընթացքում մնում են անբուժելի, հասկանում ես, պ. Սեղբակ (առանձին շեշտելով ապարոն խօսքը): Հարբել եմ, —որովհետեւ բառի բուն նշանակութեամբ մենակ եմ—ցաւերս հարցնող, դարմանող չկայ. շեմ լսում մէկից մի խորհուրդ, մի համակրական խօսք, յոյս չունիմ մէկի օգնութեան վրայ: Դու իմ համագիւղացին ես. մի ժամանակ մեր հայրերը մեր դրութեան մէջ են եղել, մի ցաւ և մի ուրախութիւն են ունեցել. միմեանց ցաւին տեղեակ, միմեանց ցաւակցող և օգնող են եղել, իսկ դու այժմ, փողոցում ինձ պատահելիս, ձեւացնում ես թէ ինձ չես տեսնում. ինձնից խորշում ես ինչպէս խոլերայից... մնացած մարդիկն էլ քեզ պէս: Երեք տարի հարեւանդ եմ. Երբես մի օր, մի, եթէ ոչ հասարակ, գոնեայ ազիզ օր մտաբերել ինձ, կանչել տունդ, հետո, որպէս մարդու, խօսացել, մի բան հարցըրել, մի բան սովորեցրել: Զէ որ զիս արել—չին արել և ուրիշ քեզ նմանները: Բայց ես էլ մարդեմ, քար չեմ. մի օր մենակութիւն, երկու օր, մի ամիս, մի տարի, անվերջ հօ տանել չի լինի... բայց ես տարիներով մենակ եմ: Մենակ եմ ոչ թէ այն պատճառով, որ գող ու աւազակ եմ, սասարկի տգէտ եմ, այլ աղքատ եմ և վարում եմ չնչին պաշտօն: Ես գտնուում եմ վատ հանգամանքների մէջ, ապրում եմ այնպիսի խուցում, ուր խոզը չի ապրի, ստանում եմ այնքան քիչ ու չնչին, որ ընտանիքս հազար ցաւերից դարմանել չեմ կարող: Ես թողել եմ տուն ու տեղ, կին ու երեխայ, եկել եմ օտարութիւն, որ փող աշխատեմ և հայրական պարտքերս վճարեմ: Ընտանեաց կարօտ, պարտքի հոգս, մինակութիւն, անքուն գիշերներ, լաց... այ ինչու եմ խմել: Խմել եմ առաջին անգամ, որ թմրեմ, որ այդ բոլորը գոնեա մի ժամ, մի րոպէ մոռանամ, բարեկամ, հասկանում ես—բայց մոռանալ չկարողանալով մօտդ եկայ, գդիւղական է մտածելով, ևփոք ինչ կը խօսեմ, դարդահան կը լինեմ: Առաջին խօսքդ—յանդիմանութիւն—որովհետեւ սենեակդ տաքէ, ընկերներ ունիս, կինդ ու երեխայքդ մօտդ պահելու աջող պայմաններ...

Իմ յանդիմանութիւնը նրա վրայ սառը ջրի ազդեցութիւն էր արել, գինովութիւնը անցել էր, նա խօսում էր լուրջ և նրա դէմքը ստացել էր տիսուր և խելօք արտայայտութիւն: Փոքր կանդ առնելուց յետոյ նա էլի սկսեց.

—Գիւղի վերջին աղքատի որդի Մինասին լիշտւմ ես ուսումնարանում։ (Հգիտեմ ինչու իր մասին սկսեց խօսել երրորդ դէմքով), նա հազար անգամ սովորեցրել է հէնց քու դասերդ։ մի անգամց մի անգամ, զեռ այն ժամանակ, լսել թս նրա մասին մի վատ բան, մի ամենաշնչին կեղտոտութիւն։ Դու գիտես որ ծացրայեղ անձարութիւնը նրան զրկեց ուսումնարանից և մանուկ հասակում շըպրտեց նրան օտարութեան մէջ պանդխտութեան ցուալը տալով ձեռքը։ Մի անգամց մի անգամ լսել թս որ նա, իր ամենանեղ դրութեան ժամանակն անգամ, արած լինի մի վարմունք, որը մարդուն կեղտոտում է, մի անգամ լսած կմս, որ նա գողացել է, մէկին մնաւել, իր ւմարդկային պատիւը նսեմացրել։ թէ դու հասարակ մշակութիւնը ստորութիւն ես համարում և անւանում Ձմս լիշտում արդեօք որ նա ձեզպէս ուսանողութեան ժամանակ իդէալիստներին նպաստած լինի իր ծառայութիւններով և նոյն իսկ աղքատիկ գրպանով, լիշտում թս Հապա ինչնու այժմ, փողոցում պատահելիս էլ, խոյս ես տալիս—նա մոռացւած է,—որովհետեւ այժմ ձեզ չեն հարկաւոր նրա, այժմ ձեզ համար չնչին, կոպէկները, նրա ծառայութիւնները։ Մոռացւած է նա, և ով գիտէ թէ մոռացւած չեն նրա պէս հազարաւորները—առանց որոնց բարոյական և նիւթական օգնութեան գուցէ դու և շատ քեզ նմանները այս իմ օրում լինէիք և հարբում լինէիք ոչ թէ երեք տարէնը մի անգամ, այլ օրը երեք անգամ։

Դուք չէք հարբում—շարունակեց նա—և կամ, երբ խմում էք, թրե չէք գալիս, բայց դա մի մեծ առաւելութիւն չէ, քանի որ ձեր սրբութիւն սրբութեանցն է թուրքի այն առածը թէ ևնրը տեսնում ես վարդը, նրան կտրիր, թուրփը այրիր, և այդ ի հարկի աւելի վատ է քան հարրելը։ Այդպիսի բան սերտած լինելով դուք ձեզ հեռու էք պահում այն ամենից, ինչից անմիջապէս օգուտ չունէք։ Մարդկանց հետ էլ յարաբերութիւն էք պահպանում, երբ նոցանից մի որ և է օգուտ էք սպասում։ երբ օգուտը վերցրած պրած է՝ նրանցից փախչում էք որպէս ժանտախտից, «մի գուցէ այժմ փոխադարձ օգնութիւն պահանջեն», մոածելով։ Ես ձեզ վազուց է ուսումնասիրում եմ և զգում ձեզանից վերին աստիճանի, անսահման կերպով։ որովհետեւ դուք նմանում էք այն ստորգեադաներին, որոնք մի կերպ, թէկուզ գողութեամբ, կին ու քոյր

վաճառելով հարստանալով, իրանց անմահ են համարում և իրանց երեկայ ընկերոջ վրայ բանեցնում են նոյն տմարդութիւնները, որոնց մի քանի ժամանակ առաջ իրանք էին ենթակայ և որոնց դէմ երեկ իրանք էին բողոքում և սա շատ եմ նկատել, որ ձեզ պէսները, երբ նոյն իսկ երկու հասարակ խօսք են ասում իրանց ոչ-բարձր ուսումնով եղբօրը, ասում են այնպէս, որ ամբողջ դէմքերը կարծես ասում լինեն՝ «տես, որքան բարի և ազնիւ ենք մենք, որ լայեղ ենք ա-նում հետղ խօսալու», այնքան մեծամիտն են նրանք, դուք: Մէկ խելքը գլխին մարդ լինի, հարցնի թէ Բնչով էք պարծենում: Որ ինժեներ էք: Հպարտանալու բանէ որ դուք մի արհեստ գիտէք, մի արհեստ հաց գտնելու համար: Զէ որ դերձակն ու դարբինն էլ մի մի արհեստահաւառներ են և իրանց համար հաց են աշխատում: Թէ դուք պարծենում էք նրանով, որ, դարբնի աշխատանքը գործ դնելով, նրանից շատ էք ստանում: «Կուշտո էք և ըմաքուր»: Թէ պարծենում էք նրանով, որ շրջապատող տգէտ հասարակութիւնը ձեզ լաւ չի ճանաչում: և նրա հարուստ (փողով) անդամները յիմարաբար տալիս են ձեզ, իրանց աղջիկների հետ, հազար ու մի ճանապարհով դանձած հարստութեան մի մասը, ձեզ այդպէս ասած որ-սում են փողով: Բայց, այնու ամենայնիւ ձեր ամբողջ ձդտումն է «հաց» գտնել: ուրեմն դարբնից բարձր չէք, իսկ շատ դարբիններից նոյն իսկ ստոր էք, որովհետեւ ըմարիուս մասին նրանք աւելի են մտածում քան թէ դուք: Նատ արհեստահաւառներ գիտեմ, որոնք իրանց դառն քրտինքի աշխատանքով նպաստել են ձեզպէսներին ուսանելու, նպաստել են, յուսալով որ մի օր կատարեալ մարդ դարձած կը գաք և, հասարակութեան շահերին նւիրելով ձեզ, լուսաւորութեան ու մարդկայնութեան կառքը առաջ կը մզէք, առաջ—դէպի իսաւար անկիւնները մեր թշւառ հայրենիքի: Խակ դուք սովորել էք զանազանել միմեանցից քարերի տեսակները, իմանալ նրանց կազմութիւնը, հագել էք փայլուն կոճակներով շորեր, մուրճերով գըլ-խարկ էք դրել, մի խօսքով կոկէտ կնկա պէս պէս զարդարւել էք զգեստներով, տգէտ և միամիտ հասարակութեան աչքը թող էք փչում, խարում նրանց և ինքներդ խարւում: . Եւ որքմն կեղծաւոր և երկերեսանի էք դուք: մի ձեռքով երեսներդ էք կնքում, միւ-սով աշխարհքը քանդում, մարդիկ դժբաղդացնում, լեզուներդ ու-

րիշ է խօսում, սրտներդ ուրիշ... զգւում եմ ձեզանից. Համեցէք, կարդացէք այս նամակը—ասաց նա—մեկնելով ինձ մի ծալած թերթ, որ նա հանեց զրպանից:

Անասելի կերպով ձանձրացել էի, հոգնել էի նրա բացառութիւններից ու քննադատութիւններից, այժմ էլ պէտք է նամակը կարդայի, չի ուզում, բայց նա այնպէս պահանջեց, որ հարկադրւած էի կարդալ:

«Սիրելի եղբայր Միհնաս—գրւած էր այդ նամակում—Այն ինչ իմ գլխին եկաւ, թշնամուս գլուխը չգայ: Անցեալ օրը տունս սղի տուն էր. այժմ էլ երբ չիշում եմ, գլուխս ստոյտ է գալիս, սիրոս հայ անում թէ տրաքւի ու ցրիւ գայ... Քեզ յայտնի Ասլանեանը Թիֆլիսից հայրենիք վերադառնալով, ձեռք է առել իր հանգուցեալ հօր՝ զի զական յայտնի վաշխառւի թողած մուրհակներով փողերը ժողովել: Մի տասը տարի սրանից առաջ բարի ժամանակը լինելով, պարտք վերցնողները իրանք զրել չիմանալով, ոս յուստո՞վ այտեան, թոյլ էին տալիս, որ մուրհակները զրւելին պարտք տոսդի ձեռքով: Թէ ինչ հեաւեանքների էր հասցնում այլպիսի պարզութիւնը, զու այդ գիտես: Հայրս էլ, զզիր Հայրապեալը, ոչ թէ միայն զրել, համբել էլ չգիտէր, փող չէր ճանաչում, չէր կարողանում մանեթանոցը հնդանոցից և հնդանոցը տասանոցից չոկել, չգիտէր՝ երեքն է շատ թէ երկուսը. մի խօսքով թւերի մասին նա բնաւ հասկացողութիւն չունէր: Ահա այդ մարդը Ասլանեանի հօրից չիսուն բուրլի փող էր վերցրել և մուրհակ տւել... Տարիների ընթացքում մենք ամբողջ լնտանիքով, ինչպէս քեզ էլ յայտնի է, նրա հլու հպատակն էինք, նրա տանն ու արտում ձրի մշակներ: Բայց այդ չնչին պարտքը Աստուծոյ կրակ ու պատիժ դարձաւ. որքան բանում էինք՝ նա հենց շարունակում էր աճել տոկոսներով և բարդ և լ մեզ համար անհասկանալի հաշիւներով:

«Կեանքի մէջ առասպելական բաներ շատ են պատահում, բայց մեր այդ պարտքի պատմութիւնը առասպելականից էլ անցել է:

«Ութ տարի Բագւում ծառայում էի և կտրելով ջանիցս ու բերանիցս՝ շարունակ փող էր որ ուղարկում էի գիւղը, որպէս զի այդ պարտքից թափւեմ և աղաս շունչ քաշեմ: Բայց իզուր. նա զնալով շառանում էր: Գլուխ ինչ ցաւացնեմ, ի միջի այլոց, ևս

Էլ Ասլանեանցի պարտականներից մէկն էի և իմ անւան գէմ նրա հօր սու մալիքքների մէջ 229 մանէթ 53 կոպէկ էր դրւած։ Թուքս չորացել էր այդ իմանալով։

«Խնձորէս զիւղացու համար, որը կէս օրավար, ուրեմն չոր հաց տալու կարողութիւնից գուրկ հող ունի հայրենիքում և որի ամսականը օտարութիւն գուրս եկած ժամանակ ամենայաջող հանդամանքներում ամենաշատը տասնունինդ մանէթ է, մի ազգպիսի գումար վճարելլ բոլորովին անհնարին լան է։ Նորա տոկոսը միայն եօթանասուն մանէթ կանի, ի՞նչ հողը տայլի զիլիխաւ կարծելով որ երիտասարդ Ասլանեանը Թիֆլիսում ձեռք բերած կը լինի և զնուութիւնն և «բարեսրութիւն» յասկութիւններից, զիմեցի նորան, բացադրեցի այդ պարագի ծննդեան և ամման պատմութիւնը և աղաչեցի որ լաւ հաշւի իր հօր տւածը տասը տոկոսով (բարդ) և մեր մշակութիւնները գուրս գայ առաջնից և եթէ սպարտ կը մնամ—այն նա պահանջիւ Բայց աւազ. կոպիխ վաշխառուն փոխել էր շորերը, լեզուն, խօսելու ձևերը. իսկ ներքուատ հարազատ ժառանգն էր մնացել իր յիշատակութեան արժանի հօր։ Նա ոչ թէ միայն չպակասացրեց պարագի քանակութիւնը, ժամանակ կը չտեց, որ աշխատեմ և այնպէս վճարեմ։ Նա ծախեց տանս եղած չեղածը, պղնձից սկսած մինչև ջրի ջամն ու բաժակը. երեխաններիս տակից հանեց մի հատիկ կարպելով, գոմիցս քշեց վերջի կովն ու հորթը և վերջապէս շբաւականանալով այդ բոլորով՝ կնոջս մատից հանել տեց նշանի և պսակի մատանիները, մէկը արծաթի միւսը ոսկու…

«Այսուեղ մնալը ինձ համար մահից վաս է և վերջապէս անհնարին է. եկամուի ոչ մի աղբիւր չունիմ, երեխայքս սովամահ լինելու վասնգի են ենթարկւած։ Մինաս, վերելը Աստւած, ներքեւ դու, յիշիր այն կտոր հացը, որ միասին կտրել ենք, խնայիր իմ անմեղ երեխաններին, ինձ համար մի որ և է գործ գտիր, մի քսան մանէթ ծանապարհի ծախք ուղարկիր, զլուխս առնեմ գամ այդտեղ, հեռանամ այս դժոխք աշխարհից, ուր ոչ լաւ զգացմունք է մնացել, ոչ մարդկութիւն, ուր մարդիկ ապրում են իրանց նմանների արիւնով, ուր մարդիկ գիշակեր գաղաններից վատթարացել են. Հեռանամ, մէջքովս քար կրեմ և մի կերպ հաց դոնիլով ազատեմ՝ երեխայոցս սովամահից և ծածկեմ ամօթս։

«Մինաս, ցաւդ առնեմ, միակ յոյսս դու ես. շուտ ինձ մի օդ-նութիւն հասցուր, փրկիր ինձ...»

Նամակի մէջ ի միջի այլոց կային մի քանի շափից դուրս տխուր տեղեկութիւններ գիւղից. «Գիւղացոց գլխին ջուր է մաղեց, ևազրուստի ոչ մի միջոց չ'ունինց, ևանտառապետը մի բիլեթ է տալիս իր արեղջիկին ածուխ այրելու. մի հատ բիլէթ. բայց նա տիրանում է անտառին և փշացնում նրան անխնահ կերպով, ևոանուտէրի կաշառակերութիւնը սահման չունինց, ևաւազակները օրը ցերեկով գիւղեր են թալանում, մարդիկ կոսորում, ևկանանց բռնաբարում, «անտէր ենք մնացել, ճայններս լսող, խօսքներս հասկացող չկայ և այլն և այլն. նամակի տակ գրւած էր «Քո թշւառ Վանէս Հայրատետեանի տեղ նորա խնդրանօք գրեց ուսուցիչ Աւետիս Աղանեան:

—Այժմ՝ նեղութիւն կրեցէք կարդալ այս յօդւածը, մեկնելով ինձ հայ լրագիրներից մէկի համարը ասաց Մինասը: Վերցրի և կարպացի:

Բաւականին կոկ լեզով թղթակիցը նկարագրել էր, իր հնամակ Զանգեղութից վերնագրով յօդւածում, գաւառական կեանքի մութ կողմերը, մորակել պետական պաշտօնեանների կաշառակերութիւնը, զանազան գրագիրների կեղտոտութիւնները և, խօսելով ժողովրդի՝ տնտեսական աննախանձելի դրութեան մասին, ամենախիստ կերպով յարձակում էր վաշխառուների դէմ, որոնք ուղղակի քանդում են երկիրը և ծծում խեղճ ժողովրդի արիւնը...» մի քանի կոպէկ կասկածելի պարտքի տեղ խլում են գիւղացու նոյն խակ գիւղատնտեսական վերջին պարագաները, քշում են նրա դոմից վերջի կովն ու հորթը, ամենաանողորմ աւազակի պէս և աւելի վատթարութեամբ ամուսինների պսակի մասանին՝ նոցա թշւառ կեանքի մի հատիկ ուրախ օրւայ այդ թանգագին նշանն անգամ՝ հանում ու տանում են և այլն և այլն, գրում էր թղթակիցը և աւելացնում՝ «Ես ինքս ականատես էի մի այրպիսի տմարդ գործողութեան Ֆ. գիւղում, ուր վաշխառուի քարասրութիւնը չափ ու սահման չունէր, որի ստոր պատկերի մօտ ստերներ են ուռւ Ռազուվաեւվեր և կալուպաեւներ» և այլն և այլն:

«Կայեցի ստորագրութեան. գրւած էր Մ. Ասլանեան:

—Այդ թղթակիցը նոյն մարդն է, որի մասին գրում է իմ բարեկամը—ասաց Մինասը—բարեկամիս տունը քանողով նկարագրում է իւր սեպհական գործերը. և այդ մարդը պատահական թղթակից չէ, այլ թերթի մշտական աշխատակից։ Այդքան ճիշդ կերպով նա նկարագրում է իր արածը և երկու նպատակի է հասնում. առաջին, տողավարձ է ստանում, և երկրորդ, միամիտ ժողովրդի մէջ առաջարկէմ ժողովրդասէրից հուշակ վաստակում։ Այդ պարոնը ձեր դասակարգին է պատկանում, այն դասակարգին, որը ինքն իրան ընտէլլիգենցիա է անւանում, որի 90 տոկոսը պահում է օժիտի վրա, որի իննասուն 0/0 «ըրբութիւն», «բարոյականութիւն» և դոցա նման բառեր իր լեկսիկոնից հանել է, որի իձե ՏԻՀ-ը հարստութիւնն է, որին հասնելու համար ամեն միջոց սուրբ է համարում, որը աշխարհքում միայն մի բանից է վախենում—աղքատութիւնից։ բայց դէպի որը տգէտ հասարակութիւնը վերաբերում է կոյր հաւառով, անսահման համակրութեամբ... Ահա թէ ինչու եմ հարբել. սիրտս որաքրում է, ինչպէս չհարբեմ, ասաց վրդովւած Մինասը տեղից վերկենալով։

—Նա առաւ գլխարկը. հէնց սենեակիս մէջ դրեց գլխին, այնպէս որ ականջներն էլ ծածկւեցին, և գնաց, նախասենեակումս իթ դասակարգի հասցէին լսւեցին հայհոյանքներ՝ և վերջապէս նա հեռացաւ։

Երբ նորա վերջին ոտնաձայնը կտրւեց, ևս, նատելով տեղս, առայ տեղական թերթը որ կարդամ, բայց չկարողացայ և, հակառակ իմ կամքի և ցանկութեան՝ այդ երեկոն չեմ մոռանում և շատ անգամ մոտածում եմ թէ պատճառն ինչ է, որ ես այսպէս անօգտաւէտ դարձայ, որ իմ բարձր ուսումով ոչ ինձ եմ երջանկացրել և ոչ ինձ շրջապատող հասարակութեանը մի օգուտ տւել, որ մեր մէջ երևան են գալիս այդպիսի վիրտուօգներ, որպիսին է իր արարքը նկարագրող վաշխառու թղթակիցը։ Մաւանանդ մտածում եմ միշտ, որտեղից և ինչ ճանապարհով է մի որ և է անգրագէտ գործակատար զարգացել և ինձ քննադատում նոյն իսկ վախենում եմ այդ հանգամանքից ուրախանալու տեղ։ Մինասից խոյս եմ տալիս, և այդ երեկոյից յետոյ հետը չեմ խօսացել և ոչ մի խօսք։